

է և ունի նկարներ և արձանագրութիւններ, բայց ժամանակը խաթարած է զանոնք: Ան ըստ բաւականի լաւ պահուած է, որով կարելի է նկարներուն մէջէն կարգալ աւետարանական դրուագին պատմութիւնը:

Ահա թէ ինչ մնացած է այդ նկարներէն: Քարին հիւսիսային կողմը նկարուած է ամրոց մը, մարդեր, էջ մը եւ աւանակ մը. արեւելքը կը տեսնուին շատ մարդեր որ արմաւենիներ կը կրեն: Արեւմուտքը կը գտնուի չորս տող լատիներէն արձանագրութիւն (անթեոնեի), կան նաև ուրիշ արձանագրութիւններ՝ բայց անորոշ: Վանական Բեռնարդոսն է միայն որ Սաչակիրներէն առաջ կը յիշատակէ այս յիշատակարան քարը: Ահա թէ ինչ կը գրէ ան 867 ին. «Ձիթենեաց լերան տրեմտեան (արեւելեան) գառլիվայրին վըրայ ցոյց կը տրուի այն քարը ուրկէ մեր Տէրը նըստաւ իշուն վրայ»: Սաչակիրներէն յետոյ վկայութիւնները շատ են և որոշ: Թէոտորիք (1172) կը պատմէ թէ Բեթփաքէ՝ որ կը գտնուի Ձիթենեաց լերան և Բեթանիայի մէջտեղը, ունի մատուռ մը, ուր կը տեսնուի քար մը՝ որուն վրայէն իշուն վրայ նստաւ մեր Տէրը Երուսաղէմ մտնելու համար: Այս քարը կը յիշատակուի մինչև ԺԶ. դար: Անոր նկարներն ու արձանագրութիւնները մինչև ԺԲ. դարու հնութիւն կըրնան ունենալ, թէև հաւանական է որ նոյն թուականէն առաջ ալ զարդեր ունեցած ըլլայ: Այս նուիրական քարը կը պահուի իր տեղւոյն վրայ, երկաթեայ ցանցակերպ վանդակով մը շրջապատուած (Ham. էջ 378-383): Այս յիշատակարանին նկարագրութիւնը հրատարակած է Clermont-Ganneau *La pierre de Bethphagé* խորագրով՝ «Revue Archéologique» էն քաղելով (տե՛ս Դեկտ. 1877):